ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 հունիսի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

75
(3284)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԵՆ ՀՐԱՎԻՐՎԵԼ

Հունիսի 16-ին մեկնարկող Ազգային Ժողովի ութերորդ գումարման փաստացի վերջին հերթական նստաշրջանը իշխանության համար կարող է դառնալ ոչ միայն օրենսդրական ակտիվության, այլեւ հաշվետվությունների եւ պատասխանատվության քննություն: Թեեւ պաշտոնական օրակարգում ընդգրկված են տասնյակ օրենքների նախագծեր, իրական քաղաքական հետաքրքրությունը կենտրոնացած է մեկ հարցի շուրջ՝ արդյո՞ք պետական մարմինների ղեկավարները վերջապես կպատասխանեն հասարակությանը հուզող հարցերին, թե խորհրդարանը կրկին կվերածվի հաշվետվությունների ձեւական ներկայացման հարթակի:

Խորհրդարան են հրավիրվել՝ Կենտրոնական բանկի, Պետական եկամուտների կոմիտեի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի, ինչպես նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ղեկավարները: Սակայն հանրությանը վաղուց այլեւս չեն հետաքրքրում գեղեցիկ թվերն ու պաշտոնական զեկույցները: Հանրությանը հետաքրքրում է՝ ինչո՞ւ է թանկանում կյանքը, ինչո՞ւ են հարկային բեռներն աճում, ինչո՞ւ է բիզնեսը դժգոհ, եւ ինչո՞ւ հակակոռուպցիոն կառույցների մասին բարձրագոչ հայտարարությունները հաճախ չեն վերածվում իրական արդյունքների:

Հատկապես ուշագրավ է լինելու Կենտրոնական բանկի տարեկան հաղորդման քննարկումը: Վերջին տարիներին քաղաքացիները սեփական գրպանի վրա են զգացել տնտեսական քաղաքականության հետեւանքները, իսկ բանկային համակարգը շարունակում է գրանցել հսկայական շահույթներ: Այս պայմաններում պատգամավորները պարտավոր են ոչ թե ընդհանուր հարցեր տալ, այլ պահանջել կոնկրետ պատասխաններ՝ գնաճի, վարկային քաղաքականության, բարձր տոկոսադրույքների եւ ֆինանսական համակարգում մրցակցության մակարդակի վերաբերյալ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Մասիսում «Ուժեղ Հայաստան» դաշինքի համակիրների, այդ թվում՝ հղի կնոջ նկատմամբ բռնության աղմկահարույց դեպքից անցել է արդեն տասը օր, սակայն նախաքննական մարմինը դեռեւս չի շտապում մեղադրյալների շրջանակը հստակեցնել եւ պատասխանատվության ենթարկելու գործընթաց սկսել: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ վերջին օրերին Քննչական կոմիտե են հրավիրվել եւ հարցաքննվել միջադեպի մի շարք մասնակիցներ, այդ թվում՝ ԵԿՄ Մասիսի մասնաճյուղի նախագահ Արսեն Հարությունյանը, որի անունը բազմիցս շրջանառվել է տեղի ունեցած բախումների համատեքստում: Սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, մինչ այս պահը որեւէ անձի նկատմամբ մեղադրանք առաջադրված չէ: Հիշեցնենք, որ 2026 թվականի հունիսի 2-ին Մասիս համայնքում մի խումբ անձինք խոչընդոտել էին «Ուժեղ Հայաստան» դաշինքի նախընտրական քարոզարշավը: Տեսանյութերում հստակ երեւում էր, թե ինչպես են մի խումբ անձինք հարվածներ հասցնում եւ քաշքշում քաղաքական ուժի ներկայացուցիչներին: Բռնության ենթարկվածների թվում էր նաեւ հղի կին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հորմուզի նեղուցում այս շաբաթ ԱՄՆ զինված ուժերի կողմից իրականացված հարվածների հետեւանքով զոհվել են առնվազն երեք հնդիկ նավաստիներ, իսկ Նյու Դելին Վաշինգտոնից պաշտոնական բացատրություն է պահանջել: Ըստ Al Jazeera-ի՝ ԱՄՆ զինված ուժերը վերջին օրերին հարվածել են առնվազն երեք առեւտրային նավերի, որոնք, ամերիկյան կողմի պնդմամբ, խախտել են Իրանի նավահանգիստների նկատմամբ սահմանված ծովային շրջափակումը: Հնդկաստանի կառավարությունը չորեքշաբթի օրը կանչել է Նյու Դելիում ԱՄՆ դեսպանատան բարձրաստիճան ներկայացուցչին այն բանից հետո, երբ ամերիկյան ուժերը Օմանի ափերի մոտ հարվածել են Պալաուի դրոշի ներքո նավարկող «Settebello» նավին: Հարձակման հետեւանքով զոհվել են երեք հնդիկ նավաստիներ, եւս 21 անդամի հաջողվել է փրկել: Դրանից ժամեր առաջ ԱՄՆ-ը հարվածել էր մեկ այլ՝ «Marivex» առեւտրային նավի, որի անձնակազմի բոլոր 24 անդամները նույնպես հնդիկներ էին: Նավաստիները օգնության կոչ էին հղել՝ տեղեկացնելով, որ նավում հրդեհ է բռնկվել, իսկ նավը խորտակման վտանգի տակ է: Հետագայում Օմանի զինված ուժերը կարողացել են փրկել անձնակազմին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Քենիայում ԱՄՆ-ի աջակցությամբ նախատեսվող Էբոլայի կարանտինային կենտրոնի դեմ բողոքի ակցիաների ընթացքում զոհված անձը եղել է դեռահաս: Այս մասին հայտնում է Reuters-ը՝ հղում անելով նրա տատիկին: 17-ամյա Սիլվեստեր Մուգայը, ըստ հարազատների, դուրս էր եկել տնից՝ դպրոցական նոր համազգեստ վերցնելու նպատակով, սակայն հայտնվել է ցույցի վայրում, որտեղ էլ մահացել է: Նրա տատիկի խոսքով՝ ոստիկանությունը ընտանիքին հայտնել է, թե երիտասարդը մահացել է արցունքաբեր գազի նռնակի հարվածից, սակայն մի շարք ականատեսներ եւ ցուցարարների ներկայացուցիչներ պնդում են, որ նա գնդակային վիրավորում է ստացել: Reuters-ի լրագրողները դեպքի վայրում տեսել են անշարժ մարմին՝ գլխի հատվածում ծանր վնասվածքով, որը տեղափոխվում էր ոստիկանության մեքենայով: Պաշտոնական մեկնաբանության մեջ տեղական ոստիկանության ներկայացուցիչը նշել է, որ զոհվածը «ցուցարար է եղել», սակայն չի կարողացել հստակ ասել՝ նա աշակերտ էր, թե ոչ: Բողոքի ակցիաները կապված են Լաիկիպիայի շրջանում նախատեսվող ԱՄՆ-ի կողմից աջակցվող կարանտինային կենտրոնի հետ, որը նախատեսված է Էբոլայի հնարավոր դեպքերի համար: Տեղի բնակիչները մտահոգված են, որ նախագիծը կարող է վտանգներ ստեղծել տարածաշրջանի համար: Բողոքի ցույցերը շարունակվել են մի քանի օր, իսկ իրավիճակը սրվել է՝ առաջացնելով բախումներ ցուցարարների եւ ոստիկանության միջեւ:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՆԱԽ ՀԱՍԿԱՆԱԼ՝ ԻՆՉ ՆՊԱՏԱԿ Է ԴՐՎՈՒՄ»

Armlur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Թեւան Պողոսյանի հետ:



- Ընտրությունների նախնական արդյունքներն արդեն պարզ են: Ինչպե՞ս եք գնահատում այս գործընթացը:

- Ելնելով իմ գործունեությունից՝ ես միշտ հետեւելու եմ ծրագրերի իրականացմանը եւ գնահատելու եմ դրանք: Սակայն այն, ինչ մենք տեսանք այս ընտրությունների ընթացքում՝ բառապաշարի, վարքագծի եւ ընդհանուր մթնոլորտի առումով, աննախադեպ էր: Դժվար է նույնիսկ այս գործընթացը անվանել ընտրություն: Ստեղծվել էր իրավիճակ, որտեղ ամեն ինչ բաժանված էր սեւի ու սպիտակի: Այդ պայմաններում շատ կարեւոր բովանդակային հարցեր դուրս մնացին քննարկումից: Դժվար է ասել, որ մենք ունեցանք լիարժեք ժողովրդավարական եւ ազատ ընտրություններ, քանի որ եղել են ճնշումների, սահմանափակումների եւ տարբեր միջամտությունների մասին բազմաթիվ ահազանգեր:

- Հունիսի 14-ին հրապարակվելու են վերջնական արդյունքները: Էական փոփոխություններ սպասո՞ւմ եք, մասնավորապես՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ կապված:

- Չեմ կարծում, որ միայն թվերի փոփոխությունը կարող է փոխել ընդհանուր պատկերը: Խնդիրը միայն այն չէ, թե որ ուժը քանի ձայն կստանա կամ խորհրդարան կանցնի: Գլխավոր հարցն այն է, որ մենք ունեցել ենք մի գործընթաց, որը շատերի գնահատմամբ չի համապատասխանել իրական ընտրության չափանիշներին: Եթե որեւէ մեկը խոստանում է, որ նույնիսկ մեկ ձայնի խախտման դեպքում ամեն ինչ բացահայտելու է, ապա պետք է նաեւ պատասխանատվություն վերցնի իր խոսքերի համար: Եթե վստահ ես, որ ամեն ինչ ճիշտ է եղել, ապա պետք է պատրաստ լինես ամբողջական վերահաշվարկի:

- Այս իրավիճակում ընդդիմությունն ի՞նչ պետք է անի: Հրաժարվի՞ մանդատներից, սկսի փողոցային պայքա՞ր:

- Կարծում եմ՝ պետք է նախ հասկանալ՝ ինչ նպատակ է դրվում: Գործողությունը պետք է ունենա հստակ վերջնարդյունք: Միայն քննարկել՝ մանդատ վերցնել, թե չվերցնել, փողոց փակել, թե չփակել, բավարար չէ: Ընդդիմությունը գործում է իր սահմանադրական լիազորությունների շրջանակում: Չի կարելի պահանջել ընդդիմությունից այնպիսի գործողություններ, որոնք գտնվում են միայն իշխանության իրավասության ներքո: Բայց նույնքան կարեւոր է նաեւ հանրության մասնակցությունը: Երբ միայն մի փոքր խումբ է դուրս գալիս պայքարի, իսկ մյուսները պարզապես քննադատում են, արդյունք ստանալը դժվար է:

- Այսինքն՝ ընդդիմությունից բացի՝ հասարակությո՞ւնն էլ պատասխանատվություն ունի:

- Այո՛: Պետք է ոչ միայն հարցնել՝ ընդդիմությունն ինչ է անում, այլ նաեւ հասկանալ՝ հանրությունն ինչ է անում: Եթե մարդը ցանկանում է փոփոխություն, պետք է մասնակցի այդ գործընթացին:

- Նիկոլ Փաշինյանը նախընտրական շրջանում հայտարարել էր, որ եթե սահմանադրական մեծամասնություն չձեւավորվի, ապա սեպտեմբերին կարող է պատերազմ լինել: Եթե «Բարգավաճ Հայաստան»-ը անցնի խորհրդարան, եւ ՔՊ-ն չունենա այդ մեծամասնությունը, պետք է սպասե՞լ պատերազմի:

- Պատերազմը կախված չէ նրանից, թե ով է նստած իշխանության մեջ կամ ինչ ազգանուն ունի: Եթե կա սպառնալիք, այն գոյություն ունի անկախ դրանից: Պատերազմի կանխարգելման լավագույն միջոցներից մեկը պատրաստվածությունն է: Կա հայտնի սկզբունք՝ եթե ցանկանում ես խաղաղություն, պետք է պատրաստ լինես պաշտպանելու այն: Պետք է հասկանալ, թե որտեղից կարող է լինել վտանգը եւ ինչ քայլեր են անհրաժեշտ երկրի անվտանգությունն ապահովելու համար:

- Անդրադառնանք նաեւ միջազգային արձագանքներին: Արեւմտյան գործընկերները շնորհավորել են Հայաստանի իշխանություններին: Ինչպե՞ս եք գնահատում դա:

- Ես կարծում եմ, որ նման հայտարարությունները պետք է ճիշտ ընկալել: Շատ երկրներ առաջին հերթին առաջնորդվում են իրենց շահերով: Երբ նրանք շնորհավորում են, դա միշտ չէ, որ նշանակում է, որ նրանք գնահատում են ամբողջ հասարակության դիրքորոշումը: Պետք է տարբերել պետության եւ իշխանության շահերը: Հայաստանի ժողովուրդը պետք է ինքնուրույն հասկանա՝ որն է իր շահը եւ ինչ քաղաքականություն է անհրաժեշտ երկրի համար:

- Ձեր կարծիքով՝ այս ընտրությունների արդյունքում ո՞վ է իրականում շահել:

- Իմ գնահատմամբ՝ ամենամեծ խնդիրը այն է, որ ներքին պառակտումները, վիրավորանքները եւ հակադրությունները թուլացնում են պետությունը: Երբ հասարակությունը բաժանվում է, դրանից կարող են օգտվել արտաքին ուժերը: Մենք պետք է մտածենք ոչ թե միմյանց դեմ պայքարելու, այլ երկրի ապագայի մասին: Պետք է հասկանալ՝ ինչ արդյունք ենք ուզում ստանալ եւ ինչ ճանապարհով ենք դրան հասնելու:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԿՄՏՑՎԵՆ

Երեւանում երթեւեկության խցանումների նվազեցման նպատակով նախատեսվում է մարդատար ավտոմեքենաների համար սահմանել որոշակի սահմանափակումներ:

Այս մասին հունիսի 12-ին ԱԺ մշտական հանձնաժողովի նիստում հայտարարել է Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ ներկայացնելով քաղաքապետարանի աշխատանքները: Նրա խոսքով՝ մայրաքաղաքում խցանումների հիմնական պատճառը տնտեսական աճն է, որը հանգեցրել է ավտոմեքենաների քանակի զգալի ավելացման: «Ինչքան էլ մենք զարգացնենք հանրային տրանսպորտը, այն չի կարող արդյունավետ աշխատել առանց մարդատար ավտոմեքենաների նկատմամբ սահմանափակումների»,- նշել է Ավինյանը:

Քաղաքապետի խոսքով՝ նախատեսվող սահմանափակումները պետք է զուգորդվեն հանրային տրանսպորտի զարգացման հետ՝ առանձնացված եւ ամբողջական երթուղային գծերի ստեղծմամբ: Նրա գնահատմամբ՝ նման մոդելներ արդեն գործում են եվրոպական մի շարք քաղաքներում եւ կիրառվելու են նաեւ Երեւանում՝ կոնկրետ տվյալների վրա հիմնված մոտեցմամբ:

Ավինյանը տեղեկացրել է, որ որոշումների հիմքում լինելու է Երեւանի երթեւեկության կառավարման կենտրոնի կողմից իրականացվող վերլուծությունը: Ներկայումս փորձնական ծրագրի շրջանակում չափվում է մայրաքաղաքի մուտքերում ավտոմեքենաների հոսքը, ինչը հնարավորություն կտա ձեւավորել ամբողջական պատկեր՝ անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ: Ըստ նրա՝ ուսումնասիրությունների արդյունքում պարզ կդառնա, թե որքան ավտոմեքենա է օրական մուտք գործում Երեւան, ինչ ծավալի կայանատեղեր են անհրաժեշտ քաղաքի տարբեր հատվածներում, ինչպես նաեւ որտեղ պետք է ներդրվեն սահմանափակումներ եւ ինչպես կազմակերպվեն հանրային տրանսպորտի առանձնացված գծերը:

Քաղաքապետի խոսքով՝ նախնական արդյունքները սպասվում են սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, իսկ ծրագրի ամբողջական իրականացումը նախատեսվում է 2027 թվականին:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՐՆ ԷՐ ՆՊԱՏԱԿԸ

«Այն, ինչ քիչ առաջ կատարվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովում, ոչ այլ ինչ է, քան դասական այլանդակություն: Գիշերվա կեսին, մթության քողի տակ, գաղտագողի կայացված այս խայտառակությունը ուղիղ ԲՀԿ-ին ուղղված հարված էր, որի նպատակը բոլոր հնարավոր միջոցներով ԲՀԿ-ին ԱԺ մտնել թույլ չտալն է»: Այս մասին երեկ երեկոյան գրել է ԲՀԿ մամուլի խոսնակ Իվետա Տոնոյանը: «Ակնհայտ է, որ անվավեր են ճանաչվել հատկապես այն տեղամասերի արդյունքները, որտեղ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը ստացել է մեծ թվով քվեներ: Սա ընտրողների ձայների գողության ամենացայտուն դրսեւորումն է, որը հերթական անգամ ապացուցում է, որ տեղի ունեցող գործընթացը որեւէ առնչություն չունի արդար եւ թափանցիկ ընտրությունների գաղափարի հետ եւ կասկածի տակ է դնում ընտրության ամբողջ գործընթացի օրինականությունը: Ընդունված որոշմամբ ամենակոպիտ ձեւով ոտնահարվում է քաղաքացիների սահմանադրական իրավունքը՝ ազատորեն արտահայտված կամքը: Մենք բոլոր հնարավոր օրինական եւ իրավական միջոցներով պայքարելու ենք այս հակաօրինական գործընթացի դեմ: Արդեն վաղը բողոքարկելու ենք այս ապօրինի որոշումը եւ օգտագործելու ենք ամբողջ իրավական գործիքակազմը՝ կանխելու եւ կասեցնելու այսպիսի կամայականությունները: Վաղը (այսօր՝ խմբ.)՝ ժամը 12:00-ին, Արգիշտի 9 հասցեում գտնվող մամուլի կենտրոնում հրավիրում ենք բոլոր լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ ներկայացնելու մեր հետագա քայլերը»,-գրել է նա:

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ

ԿԸՀ-ն հայտարարություն է տարածել. «Հարգելի՛ քաղաքացիներ, ՁԼՄ-ներ, դիտորդներ, ընտրությունների մասնակից կուսակցություններ/դաշինքներ. «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետում՝ հունիսի 14-ին, ամփոփում է Ազգային ժողովի հերթական ընտրությունների արդյունքները եւ ընդունում հետեւյալ որոշումներից մեկը.

1.Ազգային ժողով ընտրվելու եւ մանդատների բաշխման մասին.

2.Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին.

3.առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

4.Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու եւ վերաքվեարկություն նշանակելու մասին.

5.Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկությունն անվավեր ճանաչելու մասին, որի դեպքում Հանրապետության նախագահը նշանակում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություններ:

Այս պահին իրավիճակի վերաբերյալ ԿԸՀ պաշտոնական ցանկացած մեկնաբանություն կարող է ընկալվել որպես կանխակալ կարծիք, ուստի կոչ ենք անում սպասել հունիսի 14-ի քվեարկության արդյունքների վերջնական ամփոփմանը: Նիստը հեռարձակվելու է ուղիղ եթերով, բաց է լինելու նաեւ լուսաբանման համար (այդ թվում՝ այն սուբյեկտների համար, որոնք ԿԸՀ նիստերին ներկա գտնվելու իրավունք ունեն): Նիստից անմիջապես հետո ԿԸՀ նախագահը հանդես կգա մամուլի ասուլիսով»:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր տնօրեն Ցիրուն Քլիքը շնորհավորական ուղերձ է հղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Հարգելի՛ վարչապետ Փաշինյան, ցանկանում եմ ջերմորեն շնորհավորել Ձեզ Հայաստանի խորհրդարանական ընտրություններում Ձեր հաղթանակի առիթով: Կրկին ստացած այս մանդատը արտացոլում է Ձեր առաջնորդության նկատմամբ Հայաստանի ժողովրդի վստահությունը: Միջազգային անորոշության եւ տարածաշրջանային մարտահրավերների ժամանակաշրջանում Հայաստանի շարունակական հանձնառությունը երկխոսությանը, կայունությանը եւ խաղաղ հարաբերություններին առանձնահատուկ նշանակություն ունի ինչպես Հայաստանի, այնպես էլ ավելի լայն տարածաշրջանի համար: Ցանկանում եմ Ձեզ վստահեցնել Արժույթի միջազգային հիմնադրամի շարունակական հանձնառության մեջ՝ Հայաստանի իշխանությունների հետ սերտ եւ երկարատեւ համագործակցության առումով: Ձեր առաջնորդությունն արժեքավոր հնարավորություն է տալիս առաջ մղելու քաղաքականության բարեփոխումները, որոնք կբարձրացնեն դիմադրողականությունը, կամրապնդեն մակրոտնտեսական կայունությունը, կխթանեն ներառական եւ կայուն աճը եւ կբարելավեն հայ ժողովրդի բարեկեցությունը: Մենք անհամբեր սպասում ենք Ձեր Կառավարության հետ սերտ գործընկերության

ՀԱՄՈԶՎԱԾ Է

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինին՝ Ռուսաստանի օրվա առթիվ: Ուղերձում, մասնավորապես, նշված է. «Հարգելի Վլադիմիր Վլադիմիրի, ընդունեք շնորհավորանքներս Ռուսաստանի Դաշնության պետական տոնի՝ Ռուսաստանի օրվա առթիվ: Այս նշանակալի տոնը մարմնավորում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների պատասխանատվությունը իրենց երկրի ապագայի հանդեպ, ինչպես նաեւ պետության զարգացման ուղու անկախ ընտրությանն ուղղված բարեկամ ռուս ժողովրդի ձգտումը: Համոզված եմ, որ Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ժողովուրդների բազմակողմանի կապերը, ինչպես նաեւ միմյանց ինքնիշխանության եւ պետական շահերի հարգման վրա հիմնված բաց ու կառուցողական երկխոսության երկկողմ պատրաստակամությունը այսուհետ եւս կնպաստեն փոխգործակցության ամրապնդմանը եւ մեր երկրների միջեւ համագործակցության հնարավորությունների ողջ շրջանակի օգտագործմանը: Մաղթում եմ Ձեզ, հարգելի Վլադիմիր Վլադիմիրի, բարօրություն եւ հաջողություններ պետական գործունեության մեջ, իսկ Ռուսաստանի ժողովրդին՝ ամենայն բարիք եւ բարգավաճում»,- ասված է Փաշինյանի ուղերձում:

ԱՄՆ-ԻՐԱՆ

ԹՐԱՄՓԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է, ԹԵՀՐԱՆԸ՝ ՊՆԴՈՒՄ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ Իրանի հետ պատերազմին վերջ դնելու վերաբերյալ համաձայնագիրը մոտ է ավարտին, սակայն Թեհրանը ջատել է հերքել, որ որեւէ վերջնական պայմանավորվածություն արդեն ձեռք է բերվել:

Թրամփը լրագրողների հետ զրույցում նշել է, որ ամերիկացի բանակցողները «հենց նոր մեծ համաձայնության են հասել» Իրանի հետ, եւ այժմ մնում է միայն փաստաթղթերի վերջնականացումը, որը, նրա խոսքով, կարող է ավարտվել առաջիկա մի քանի օրերի ընթացքում: «Մենք ունենք պայմանավորվածություն, որի համաձայն Իրանը երբեք չի ունենա միջուկային զենք: Դա էր ամբողջ գործընթացի հիմնական նպատակը, եւ սա շատ մեծ ձեռքբերում է»,- հայտարարել է ԱՄՆ նախագահը՝ հավելելով, որ հնարավոր է համաձայնագրի ստորագրման արարողություն անցկացվի Եվրոպայում: Սակայն Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Էսմայիլ Բաղային պետական հեռուստատեսությանը տված հարցազրույցում նշել է, որ համաձայնագրի վերաբերյալ հրապարակումները «միայն ենթադրություններ են»:

«Ոչինչ դեռ վերջնականացված չէ»,- ընդգծել է նա՝ հավելելով, որ թեեւ հուշագրի հիմնական տեքստի մեծ մասն արդեն համաձայնեցված է, ԱՄՆ-ն վերջին փուլում առաջ է քաշել նոր եւ, Իրանի գնահատմամբ, «չափազանցված պահանջներ»: Միաժամանակ Բաղային հայտարարել է, որ Թեհրանը չի պատրաստվում հատել իր «կարմիր գծերը»:

Թրամփի հայտարարություններից հետո Brent տեսակի նավթի գինը կտրուկ նվազել է՝ մեկ օրվա ընթացքում կորցնելով շուրջ 4,4 տոկոս եւ հասնելով մոտ 89 դոլարի մեկ բարելի դիմաց: Շուկաները դա գնահատել են որպես տարածաշրջանային լարվածության հնարավոր թուլացման ազդակ: ԱՄՆ նախագահը նաեւ հայտարարել է, որ համաձայնագրի ստորագրումից հետո արագ կվերաբացվի Հորմուզի նեղուցը, որը համաշխարհային նավթի եւ հեղուկ բնական գազի մատակարարումների կարեւորագույն ուղիներից է:

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի գրասենյակը հաստատել է, որ Թրամփի հետ հեռախոսազրույց է տեղի ունեցել, սակայն ընդգծել, որ Իսրայելը չի հանդիսանում քննարկվող հուշագրի կողմ: Միեւնույն ժամանակ Նեթանյահուն, ըստ պաշտոնական հաղորդագրության, աջակցություն է հայտնել այնպիսի համաձայնության գաղափարին, որը կներառի Իրանի հարստացված ուրանի պաշարների հեռացումը, հարստացման ենթակառուցվածքների ապամոնտաժումը, հրթիռային ծրագրի սահմանափակումը եւ տարածաշրջանում Թեհրանի դաշնակից զինված խմբավորումներին աջակցության դադարեցումը:

Հակառակ բանակցությունների շուրջ լավատեսական հայտարարություններին՝ ռազմական լարվածությունը շարունակվում է: Այս շաբաթ ԱՄՆ-ն եւ Իրանը փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց թիրախներին:

ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը հայտնել է, որ Իրանի հարավում հարվածներ է հասցրել ռազմական, հետախուզական եւ ռադարային օբյեկտներին: Ի պատասխան՝ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը հայտարարել է Բահրեյնում, Քուվեյթում եւ Հորդանանում տեղակայված ամերիկյան բազաների ուղղությամբ հարձակումների մասին:

Բահրեյնի իշխանությունների տվյալներով՝ իրանական անօդաչու թռչող սարքի հարվածի հետեւանքով վիրավորվել է 11-ամյա մի աղջիկ, վնասվել են նաեւ բնակելի տներ եւ ավտոմեքենաներ:

Իրանի զինված ուժերը նախազգուշացրել են, որ նոր հարձակումների դեպքում պատասխանն ավելի կոշտ կլինի: Թեհրանը նաեւ զգուշացրել է, որ եթե իր նավթային ենթակառուցվածքները կրկին թիրախավորվեն, ապա տարածաշրջանում նավթի եւ գազի արտահանման անվտանգությունը կարող է վտանգվել բոլորի համար:

Միջազգային հանրությունը շարունակում է կոչ անել կողմերին զսպվածություն ցուցաբերել: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշի գրասենյակը հայտարարել է, որ խորապես մտահոգված է Մերձավոր Արեւելքում շարունակվող էսկալացիայով եւ կոչ է արել վերադառնալ հրադադարի լիարժեք պահպանմանը:

Դեէսկալացիայի անհրաժեշտության մասին հայտարարել են նաեւ Ռուսաստանը, Չինաստանը, Թուրքիան, Հնդկաստանը, Պակիստանը եւ Սաուդյան Արաբիան:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Թուրքիայի նախագահ Ռեջեթ Թայիփ Էրդողանը շնորհավորական ուղերձ է հղել վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ խորհրդարանական ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հաղթանակի առթիվ: Ուղերձում ասված է. «Իմ ժողովրդի եւ անձամբ իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ 2026 թ. հունիսի 7-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացված խորհրդարանական ընտրություններում Ձեր ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության արձանագրած հաջողության առթիվ եւ հաջողություն մաղթում երրորդ անգամ կառավարություն ձեւավորելու գործում: Ես լիովին հավատացած եմ, որ տարածաշրջանում երկարատեւ խաղաղության եւ կայունության հաստատման եւ այդ ուղղությամբ անհրաժեշտ համագործակցության ապահովման վերաբերյալ Ձեր ռազմավարական տեսլականը հաջողությամբ ավարտին կհասցվի: Օգտվելով առիթից՝ կրկին մաղթում եմ Ձեզ առողջություն եւ բարեկեցություն, իսկ Հայաստանի ժողովրդին՝ բարգավաճում եւ երջանկություն»:

ՆԱՎԹԻ ՀՈՒՍԱԼԻ ՄԱՏԱԿԱՐԱՐ

Ռուսաստանը ապացուցել է, որ Հնդկաստանի համար հուսալի գործընկեր է նավթի մատակարարման հարցում, մինչդեռ Միացյալ Նահանգները այս ոլորտում գործում է բացառապես սեփական շահերից ելնելով: Այս մասին հայտարարել է Հնդկաստանի արտաքին գործերի նախարար Սուբրամանյամ Ջայշանկարը՝ ելույթ ունենալով Ֆինլանդիայում կայացած «Կուլտարանտա Թեքս» համաժողովում: Արձագանքելով մոդերատորի այն դիտարկմանը, որ Հնդկաստանը երկիմաստ է եղել, չեզոք դիրքորոշում է ընդունել ուկրաինական հակամարտության հարցում, «չափազանց մեծ համակրանք է ցուցաբերել Ռուսաստանի նկատմամբ եւ չափազանց հեշտությամբ գնել է նրա նավթը», Ջայշանկարը նշել է, որ Հնդկաստանը հիմնականում «նավթ է գնում գնի եւ մատչելիության հիման վրա»: «Մինչեւ 2022 թվականը մենք ռուսական նավթի զգալի ծավալներ չէինք գնում, բայց հանգամանքները մեզ ստիպեցին մտնել այս շուկա: Պետք է ասեմ, որ Ռուսաստանը ապացուցել է, որ ինքը հուսալի մատակարար է. նրանք մատակարարումներ էին ապահովում, իսկ գնորդները ընտրում էին ամենահիմնավոր եւ մատչելի տարբերակը: Եվ ես ուզում եմ, որ մարդիկ հիշեն սա», - ասել է նա:

ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ՀԵՏԱԽՈՒՋՈՒՄ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ Է ԸՆՏՐՎԵԼ ԿԱԼԱՆՔԸ

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, հայտարարվել է հետախուզում:

Օրեր առաջ ՔԿ-ն հայտնել էր, որ ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ 2009-2016 թվականներն ընկած ժամանակահատվածում ՀՀ կրթության եւ գիտության նախարարի պաշտոնը զբաղեցրած Ա.Ա.-ն, լիազորված լինելով խթանել կրթության եւ գիտության զարգացմանը, մշակել եւ իրականացնել կրթության եւ գիտության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը, 2008 թվականի օգոստոսի 20-ից մինչեւ 2014 թվականի ապրիլի 26-ը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի, ապա մինչեւ 2016 թվականի սեպտեմբերի 20-ը ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնները զբաղեցրած Գ.Խ.-ի եւ վերջինիս որդու՝Ա.Խ.-ի նյութական օգուտը՝նրանց կողմից շահեկան պայմաններով, առանց խոչընդոտների, օտարման ոչ ենթակա գույք ձեռք բերելն ապահովելու անձնական շահագրգռվածությունից եւ խմբային շահերից ելնելով, խմբի կազմում՝ ՀՀ «Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ Վ.Ս.-ի, նույն ՊՈԱԿ-ի ռեկտոր Գ.Գ.-ի, պրոռեկտոր Ա.Ա.-ի, Ա.Խ.-ի, Գ.Խ.-ի, ինչպես նաեւ վերջիններիս հետ փոխկապակցված Հ.Թ.-ի հանցակցությամբ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչի հետեւանքով Հայաստանի Հանրապետության սեփականության ֆոնդից կոռուպցիոն սխեմայի կիրառմամբ դուրս է բերվել Երեւան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Պուշկին փողոցի 38/1 շենքի թիվ 59 հասցեում գտնվող 208 մլն 908 հզր 500 ՀՀ դրամ արժեքով առանձնապես խոշոր չափերով 451.1 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը եւ դրա անբաժանելի մաս համարվող հողամասը եւ ոչ ուսումնական նպատակներով օգտագործելու համար փոխանցվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի եւ վերջինիս հետ փոխկապակցված անձի սեփականության ֆոնդ:

Բացի դա, օրենքի դրույթի կոպիտ խախտմամբ բարձրագույն ուսումնական հաստատությունը զրկվել է իրեն հատկացված գույքից՝ուսումնական նպատակներով տնօրինելու եւ օգտագործելու հնարավորությունից:

Դրանից հետո, Ա.Խ.-ն եւ Գ.Խ.-ն իրենց մտերիմ Հ.Թ.-ի հետ ունեցած նախնական պայմանավորվածության համաձայն, հանցավոր ճանապարհով ՀՀ Երեւան քաղաք Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի փողոց 38/1 շենք թիվ 59 հասցեում գտնվող 451.1 քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքի ձեռքբերման գործընթացում քողարկելով գույքի իրական պատկանելիությունը, ինչպես նաեւ նպատակ ունենալով թաքցնել եւ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը՝ նախ որպես գույք ձեռք բերող ներկայացրել են Հ.Թ.-ին, ապա բարեխիղճ ձեռք բերող հանդես գալու ակնկալիքով վերջինիցս 75 մլն ՀՀ դրամով գնել են նշված գույքը՝ գրանցելով այն Ա.Խ.-ի անվամբ:

Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, դրա օժանդակության, խմբի կողմից առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման եւ դրանց օժանդակության համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քրեական հետապնդում է հարուցվել վերը նշված 7 անձի նկատմամբ: Որոշումներ են կայացվել ազատության մեջ գտնվող մեղադրյալներին դատարան ներկայացնելու համար ձերբակալելու մասին:

ԼՈՒՐԵՐ

ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Սեյրան Օհանյանը չի ներկայացել երեկվա դատական նիստին: Այդ պատճառով դատավորը որոշում է կայացրել նրան բերման ենթարկելու մասին: Հիշեցնենք, որ 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին առնչվող՝ իբրեւ սահմանադրական կարգի տապալման գործով մեղադրյալի կարգավիճակում էին ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ ԶՈՒ նախկին գլխավոր շտաբի պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանը եւ ՀՀ նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանը: Յուրի Խաչատուրովը եւ Սեյրան Օհանյանը մեղադրվում էին սահմանադրական կարգը տապալելու համար, Ռոբերտ Քոչարյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելու եւ առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, իսկ Արմեն Գեւորգյանը՝ ՀՀ սահմանադրական կարգը տապալելուն օժանդակելու, առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու համար:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ

ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդուն՝ Արտյոմ Խաչատրյանին, նախաքննական մարմինը երեկ է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրել դատարան: Ինչո՞ւ է երեկ նախաքննական մարմինը պաշտոնական հաղորդագրությունից 5 օր անց նախկին պաշտոնյայի որդու խափանման միջոցի հարցը բարձրացնում, դժվար է ասել, սակայն փաստ է մեկ բան, որ այս գործով նախկին պաշտոնյաներից շատերին ընտրություններից առաջ կալանավորեցին, իսկ Գագիկ Խաչատրյանի որդուն որոշել են ընտրություններից հետո խափանման միջոցի հարցը քննարկել: Հիշեցնենք, որ հունիսի 5-ին ՔԿ-ն հայտնել էր պաշտոնեական լիազորությունների չարաշահման եւ փողերի լվացման քրեական վարույթի մասին, որտեղ մեղադրյալի կարգավիճակ ունի Արմեն Աշոտյանը: ՊԵԿ-ի նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի որդին՝ Արտյոմ Խաչատրյանը, եւս անցնում է պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, դրա օժանդակության, խմբի կողմից առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման եւ դրանց օժանդակության համար ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով: Նրա նկատմամբ դեռ խափանման միջոց չի ընտրվել: Շուտով պարզ կլինի նրա ճակատագիրը:

Հունիսի 5-ին ընտրակաշառք տալու, ստանալու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում 2 ամսով կալանավորվել է նաեւ Պետական գույքի կառավարման վարչության նախկին պետ Արման Սահակյանը: Նա այս պահին կալանքը կրում է Արմավիրի քրեակատարողական հիմնարկում:

Հունիսի 5-ին Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում 1 ամսով կալանավորվել է նաեւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանը: Ըստ կոմիտեի՝ վերջինս մեղադրվում է պաշտոնեական լիազորությունների չարաշահման եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման մեջ: Նա այս պահին կալանքը կրում է ԱԱԾ մեկուսարանում:

Ք. Մ.

ԼՈՒՐԵՐ

ԱՂԲԱՏԱՐԸ ՎՐԱԵՐԹԻ Է ԵՆԹԱՐԿԵԼ ՀԵՏԻՈՏՆԻՆ

Հունիսի 11-ին վրաերթ-ավտովթար է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 17:20-ի սահմաններում Մասիս-Նուբարաշեն ավտոճանապարհին Արարատի մարզի բնակիչ 44-ամյա Հովհաննես Ղ.-ն իր վարած «ԿամԱԶ» մակնիշի աղբատարով վրաերթի է ենթարկել հետիոտնին, ապա բախվել Երեւանի բնակիչ 64-ամյա Արտավազդ Բ.-ի վարած թիվ 6 երթուղին սպասարկող «Higer» մակնիշի ավտոբուսին: Shamshyan.com-ի հաղորդմամբ՝ վրաերթի ենթարկվածը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է «Էրեբունի» բժշկական կենտրոն: Դեպքի փաստով Մասիսի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզվում է վրաերթի ենթարկվածի ինքնությունը:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Շորթման նպատակով ավտոմեքենայից կողային հայելու ապակիների գողության հերթական ահազանգը Համայնքային ոստիկանության Դավթաշենի բաժնում ստացվել էր մայիսի 29-ին:Դավթաշենի 4-րդ թաղամասի բնակիչն առավոտյան հաղորդում էր տվել, որ գիշերը տարել են շենքի բակում կայանված իր «Մերսեդեսի» հայելիների ապակիներն ու թողել Տելեգրամյան հասցեի հղում: Նույն օրը նախաձեռնվեց քրեական վարույթ՝ գողության եւ շորթման հատկանիշներով: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում իրավապահները ստացան հավաստի տեղեկություն, որ շորթման նպատակով գողությունը կատարել է մայրաքաղաքի Վերֆելի փողոցի բնակիչ 28-ամյա մի երիտասարդ: Հունիսի 5-ին նրա նկատմամբ հարուցվեց հանրային քրեական հետապնդում, եւ նույն օրն էլ նա ձերբակալվեց ու ներկայացվեց նախաքննական մարմին: Դատարանի որոշմամբ երիտասարդի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունը շարունակվում է: ՆԳՆ ոստիկանությունը հետեւողական աշխատանք է իրականացնում նման հանցագործությունները կանխելու եւ բացահայտելու ուղղությամբ:

● *Անցած 1 օրում գրանցվել է 21 ավտովթար. 35 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

1122 ԱՐՑԱԽՑԻ ՏԱՎՈՒՇԻՑ ՀԵՌԱՑԵԼ Է

2025թ. օգոստոսի 18-ին իր տեսաուղերձում վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնավորապես հայտարարել է. «Ղարաբաղից տեղահանված մեր հայրենակիցների ապագայի մասին մեր պատկերացումը հետեւյալն է. նրանք մեր եւ միջազգային հանրության աջակցությամբ պետք է տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում եւ այստեղ ապրեն, ստեղծագործեն, հաստատվեն՝ որպես Հայաստանի Հանրապետության լիարժեք քաղաքացիներ»:

2023թ.-ին բռնագաղթված արցախցիները ինչպե՞ս են տնավորվել Տավուշի մարզում: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ 2023 թվականի աշնանը Արցախից բռնագաղթած մեր հայրենակիցներից 780 ընտանիք՝ 2970 անձ, բնակություն է հաստատել Տավուշում: Տավուշի մարզային խորհրդի 2024թ. հունիսի 24-ի նիստում քննարկվել է Արցախից բռնագաղթածներին բնակարաններով ապահովման ծրագիրը, որի վերաբերյալ զեկուցել է Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Աղաբեկ Գալստյանը: Տավուշի մարզպետարանից տեղեկացել եմ, որ 2025թ. մարտի դրությամբ արցախցի ոչ մի ընտանիք Տավուշի մարզում չի օգտվել բնակարաններով ապահովման այդ ծրագրից: Հիմնական աշխատանք, սեփական բնակարան չունեցող արցախցի ընտանիքների մի զգալի մասը ժամանակի ընթացքում հեռացել է Տավուշից, հաստատվել Հայաստանի այլ բնակավայրերում կամ արտերկրում:

Հունիսի 4-ին Տավուշի մարզպետարան տեղեկատվական հարցում եմ կատարել. «Հունիսի 4-ի դրությամբ որքա՞ն է Տավուշի մարզում բնակվող, Արցախից բռնագաղթած ընտանիքների, բնակիչների թիվը, նրանցից քանի՞սն է պետական բնակարանային ապահովման ծրագրով Տավուշի մարզում բնակարան ձեռք բերել, ո՞ր համայնքում՝ քանի՞ ընտանիք»: Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին փոխարինող Ասքանազ Բաբլումյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հունիսի 4-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում բնակվում է ԼՂ-ից բռնի տեղահանված 525 ընտանիք եւ 1848 անձ»:

Մարզպետարանի պատասխանում անտեսված է լրագրողիս այն հարցը, թե Արցախից բռնագաղթած ընտանիքներից քանիսն է պետական բնակարանային ապահովման ծրագրով Տավուշի մարզում բնակարան ձեռք բերել, որ համայնքում՝ քանի ընտանիք: 2023թ. սեպտեմբերից հետո՝ անցած 2 տարի եւ 8 ամիսների ընթացքում, Տավուշում հաստատված 780 ընտանիքներից ներկայումս Տավուշի բնակավայրերում ապրում է 525 ընտանիք, 255 ընտանիք հեռացել է Տավուշի մարզից: 2023 թվականին Տավուշի մարզում բնակություն հաստատած 2970 անձանցից այժմ մարզում մնացել է 1848-ը, 1122 անձ հեռացել է Տավուշից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ

ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՍՆԵԼ ՄԻՆՉԵՎ 1 ՄԼՐԴ ԴՈԼԱՐԻ ԱՌԵՎՏՐԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

Թուրքական Yeni Safak լրատվամիջոցը գրել է, որ Ալիջան (Մարգարա) եւ Աֆյակա (Ախուրիկ) սահմանային անցակետերի բացման դեպքում Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունների կարգավորման գործընթացը կարող է արագանալ, իսկ երկկողմ առեւտրաշրջանառությունը հասնել մինչեւ 1 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Հոդվածում նշվում է, որ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ տարածաշրջանային խաղաղության եւ հարաբերությունների կարգավորման վերաբերյալ հայտարարություններից հետո Երեւան-Անկարա գործընթացը կրկին ակտիվացել է: Ըստ հրապարակման՝ կողմերի միջեւ դիվանագիտական շփումները շարունակվում են, եւ առաջիկայում հնարավոր են կոնկրետ քայլեր սահմանների բացման ուղղությամբ: Նախատեսվում է, որ առաջին փուլում կբացվի Իգդիրի շրջանում գտնվող Ալիջան սահմանային անցակետը: Ըստ պարբերականի հայկական կողմում նախապատրաստական աշխատանքները հիմնականում ավարտված են, իսկ թուրքական կողմում գործընթացը մոտենում է ավարտին: Հնարավոր է, որ արդեն ամռան ամիսներին սկսվեն ցամաքային անցումները եւ առեւտրային փոխադրումները:

Միաժամանակ շարունակվում են Կարսի շրջանում գտնվող Աքյակա-Ախուրիկ երկաթուղային անցակետի բացման աշխատանքները, ինչը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ երկու երկրների միջեւ տրանսպորտային կապերի զարգացման համար:

Առեւտրաշրջանառության աճի կանխատեսում

Հոդվածում ընդգծվում է, որ սահմանների բացման դեպքում ներկայումս մոտ 300-350 միլիոն դոլար գնահատվող առեւտրաշրջանառությունը կարող է զգալիորեն աճել: Նշվում է, որ ներկայումս առեւտուրը հիմնականում իրականացվում է Վրաստանի միջոցով, սակայն ուղիղ սահմանային կապի բացումը կվերացնի միջնորդ երկրներին կախվածությունը: Ըստ կանխատեսումների՝ լոգիստիկ ծախսերի նվազումը, փոխադրումների արագացումը եւ շուկաների ուղիղ հասանելիությունը կարող են հանգեցնել նրան, որ Թուրքիա-Հայաստան առեւտրաշրջանառությունը կարճ ժամանակում հասնի մինչեւ 1 միլիարդ դոլարի: Հոդվածում նաեւ նշվում է, որ գործընթացը կարող է նպաստել Հարավային Կովկասում տնտեսական ինտեգրման խորացմանը եւ տարածաշրջանային տրանսպորտային միջանցքների ընդլայնմանը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՑ ԱՄՍՈՎ ԿԱՐԳԵԼՎԻ

Գործադիրն ընդունել է «Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0 ծածկագրին դասվող ցորենի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» որոշում: Ըստ այդմ՝ ժամանակավոր (6 ամիս ժամկետով) արգելք կսահմանվի ցորեն ապրանքատեսակի նկատմամբ: Որոշումն ուղղված է ՀՀ պարենային անվտանգության եւ տնտեսության կայունացման ապահովմանը: Ըստ հիմնավորման՝ նշված ապրանքատեսակի մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը, ինչն ապահովվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին: Որոշմամբ սահմանվող արգելքը չի տարածվելու ՀՀ ներմուծված եւ «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով ձեւակերպված ՀՀ-ից արտահանվող ապրանքների վրա: Մեկ այլ որոշմամբ էլ ժամանակավոր՝ 6 ամիս արգելք է սահմանվել ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման նկատմամբ: Որոշման ընդունումը պայմանավորված է ՀՀ-ում շրջակա միջավայրի պաշտպանության մակարդակի բարձրացմամբ՝ մասնավորապես առանց չեզոքացման համակարգի տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ վնասակար նյութերն անարգել մթնոլորտային օդ արտանետումը նվազեցնելու մասով, ինչպես նաեւ ավտոմեքենաների վրա տեղադրված կատալիզատորների ապօրինի շրջանառությունը կանխելու անհրաժեշտությամբ:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ Է

Ռոսսելխոզնադզորը 2026 թվականի հունիսի 12-ից սահմանափակում է Հայաստանից ծագող եւ առաքվող ամբողջ ենթակարանտինային արտադրանքի ներկրումը, ինչպես նաեւ դրա տարանցումը Ռուսաստանի տարածքով դեպի ԵԱՏՄ անդամ պետություններ: Արգելքը կգործի մինչեւ առաքվող ապրանքների անվտանգության եւ հետագծելիության ապահովման կոնկրետ ալգորիթմի մշակումը:

«Որոշումը կայացվել է կարանտինային օբյեկտների համակարգված հայտնաբերման պատճառով: Ծառայությունը, սկսած ընթացիկ տարվա մայիսից, փուլ առ փուլ սահմանափակել է հայկական ենթակարանտինային արտադրանքի առանձին տեսակների ներկրումը, ինչպես նաեւ բազմիցս հայկական կողմին տեղեկատվություն է ուղարկել մատակարարումների խախտումների վերաբերյալ:

Այնուամենայնիվ, կարանտինային օբյեկտների հայտնաբերման դեպքերը շարունակվում են: Հունիսին հայտնաբերվել է Հայաստանից ստացված ընկույզի, չորացրած դեղձի եւ չորացրած լոլիկի մեջ կապրային բզեզով վարակման 3 դեպք: Նշվածը վկայում է Հայաստանի լիազոր մարմնի կողմից անբավարար վերահսկողության մասին եւ անվստահություն է առաջացնում բուսասանիտարական հավաստագրման համակարգի նկատմամբ: Հայաստանի կարանտինի եւ բույսերի պաշտպանության ծառայության գործունեության անարդյունավետությունը վտանգի տակ է դնում Ռուսաստանի եւ ԵԱՏՄ բուսասանիտարական բարեկեցությունը»,- գրված է հայտարարության մեջ: Կապրային բզեզը պաշարների բազմակեր բզեզ է, որը բացակայում է Ռուսաստանի տարածքում: Այն վնասում է հացահատիկային, յուղատու, ընդավոր, տեխնիկական մշակաբույսերի հատիկները եւ դրանց վերամշակման արտադրանքը, ինչպես նաեւ անտառային, դեկորատիվ եւ այլ մշակաբույսեր: Կարող է վարակել հացահատիկի պահեստները, տրանսպորտային միջոցները, հումքի եւ ալյուրի պահեստները, ջրաղացները, համակցված կերերի գործարանները, հրուշակեղենի ֆաբրիկաները եւ գարեջրատների պահեստները:

«Այն ունակ է ոչնչացնել պահվող արտադրանքի մինչեւ 70%-ը: Ռուսաստանի տարածքի համար տնտեսական վնասը կարող է արտահայտվել ոչ միայն բերքի կորստով, օջախների տեղայնացման եւ վերացման միջոցառումներով, այլեւ այն երկրների հետ արտահանման շուկաների հնարավոր կորստով, որտեղ այս վնասատուն բացակայող կարանտինային օբյեկտ է, ինչը կհանգեցնի արտահանվող հացահատիկային արտադրանքի ախտահանման համար լրացուցիչ տնտեսական ծախսերի»,- նշվում է հայտարարության մեջ:

● Հանրապետությունում հունիսի 10-ից 11-ը գրանցվել է 1-ական դեպք՝ անձնական ունեցվածքի գողության եւ քվեարկության գաղտնիությունը խախտելու:

ԱՊԱՌԻԿ

ՅՈՒՆԻԲԱՆԿՆ ՈՒ WILDBERRIES-Ը ԳՈՐԾԱՐԿԵԼ ԵՆ

Wildberries-ը Յունիբանկի հետ համագործակցությամբ Հայաստանում օգտատերերին հնարավորություն է տալիս ձեւակերպել գնումներ ապառիկ: Պատվերի ձեւակերպման փուլում՝ զամբյուղում կամ «Վճարել հիմա» կոճակը սեղմելիս, օգտատերը վճարման տարբերակներում կարող է ընտրել Յունիբանկը: Ապառիկ ձեւակերպելու համար համակարգը օգտատիրոջը տեղափոխում է բանկի էջ, որտեղ նա անցնում է վարկային հայտի դիտարկման եւ հաստատման գործընթացը: Ապառիկը հնարավոր է ձեւակերպել մինչեւ 2 500 000 ՀՀ դրամի չափով՝ մինչեւ 36 ամիս ժամկետով. հստակ այմանները սահմանվում են յուրաքանչյուր հաճախորդի համար անհատապես: Տոկոսադրույքը եւ մարման պայմանները ցուցադրվում են ձեւակերպման փուլում: Եթե գնորդը որոշի հրաժարվել ապրանքից, վճարված գումարները կվերադարձվեն: Այս դեպքում վարկային պայմանագրի պարտավորությունները կվերահաշվարկվեն կամ կփակվեն: «Մեզ համար կարեւոր է, որ յուրաքանչյուր գնորդ ունենա ընտրության ազատություն, այդ թվում՝ վճարման եղանակների ընտրության հարցում: Յունիբանկի հետ ինտեգրացիան թույլ է տալիս օգտատերերին առաջարկել թափանցիկ եւ արագ ծառայություն անմիջապես հարթակի ներսում: Մենք տեսնում ենք, որ ժամանակակից ֆինանսական լուծումների հասանելիությունն ուղղակիորեն ազդում է հաճախորդների հավատարմության վրա. երբ մարդը կարողանում է հենց հիմա ձեռք բերել ցանկալի ապրանքը եւ վճարել դրա համար իրեն հարմար ժամկետներում՝ դա փոխում է գնումների ամբողջ մոտեցումը: Մենք շարունակելու ենք նման գործիքների ներդրումը՝ Wildberries-ում գնումները հնարավորինս հասանելի դարձնելու համար»,-նշել է Wildberries-ի Հայաստանի տարածաշրջանային տնօրեն Դավիթ Միրզոյանը:

«Յունիբանկը շարունակում է զարգացնել թվային ֆինանսական լուծումները՝ վարկավորման գործընթացը դարձնելով հնարավորինս պարզ եւ հարմար հաճախորդների համար: Մենք Հայաստանի սպառողական վարկավորման շուկայի առաջատարներից ենք, եւ մեզ համար կարեւոր է, որ բանկային ծառայությունները հասանելի լինեն հենց այնտեղ, որտեղ դա հարմար է հաճախորդին: Wildberries-ի հետ համագործակցության շնորհիվ գնորդները կարող են ապառիկ ձեւակերպել անմիջապես գնման ժամանակ՝ ընդամենը մի քանի քայլով: Նոր ծառայությունը հնարավորություն է տալիս ձեռք բերել ցանկալի ապրանքները՝ առանց երկար ժամանակ խնայողություններ անելու կամ գնումը հետաձգելու անհրաժեշտության»,-նշել է Յունիբանկի Վարչության նախագահի առաջին տեղակալ, մանրածախ բիզնեսի զարգացման եւ վաճառքների տնօրեն Գուրգեն Ղուկասյանը: *(Գ)*

TEAM TELECOM ARMENIA

TEAM TELECOM ARMENIA-Ն ՃԱՆԱՉՎԵԼ Է ԱՌԱՔԱՏԱՐ

12 հունիսի, 2026թ., Երեւան. Team Telecom Armenia-ն Հայաստանի ֆոնդային բորսայի (AMX) ամենամյա մրցանակաբաշխության ընթացքում արժանացել է «Ցուցակված բաժնետոմսերի շուկայում առաջատար ոչ ֆինանսական թողարկող» մրցանակին: Մրցանակը շնորհվել է ընկերության ցուցակված բաժնետոմսերով 2025 թվականի ընթացքում իրականացված գործարքների ծավալի հիման վրա:

Պարգեւատրումը վկայում է Team-ի նկատմամբ ներդրողների բարձր վստահության, ինչպես նաեւ Հայաստանի կապիտալի շուկայի զարգացման գործում ընկերության կարեւոր դերակատարության մասին: Բաժնետոմսերի ակտիվ շրջանառությունը շուկայում արտացոլում է ներդրողների հետաքրքրությունն ընկերության երկարաժամկետ զարգացման ռազմավարության, ֆինանսական կայունության եւ աճի հեռանկարների նկատմամբ:

«Այս մրցանակն արտացոլում է Team Telecom Armenia-ի նկատմամբ ներդրողների վստահությունը եւ հաստատում, որ ընկերության կողմից իրականացվող ռազմավարական նախաձեռնություններն ու ներդրումային ծրագրերը դրական արձագանքի են արժանանում կապիտալի շուկայում: Մենք շարունակելու ենք աշխատել թափանցիկ, հաշվետու եւ կայուն բիզնես մոդելի զարգացման ուղղությամբ՝ ստեղծելով երկարաժամկետ արժեք մեր բաժնետերերի, հաճախորդների եւ Հայաստանի տնտեսության համար»,-նշում է Team Telecom Armenia-ի ֆինանսական տնօրեն Կարեն Մնացականյանը:

Team Telecom Armenia-ն շարունակում է հետեւողականորեն զարգացնել կորպորատիվ կառավարման եւ թափանցիկության լավագույն պրակտիկաները՝ ապահովելով բաժնետերերի եւ ներդրողների համար բաց ու կանխատեսելի գործարար միջավայր:

Հիշեցնենք, որ Team Telecom Armenia-ն տեղաբաշխել էր 8 միլիարդ 240 միլիոն դրամ արժողությամբ 40 միլիոն բաժնետոմս, եւ շուրջ 1000 ներդրող դարձել էր ընկերության բաժնետեր: Team-ի բաժնետոմսերը շարունակում են լինել ազատ շրջանառության մեջ, եւ շուկայի մասնակիցները կարող են գնել կամ վաճառել դրանք:

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն: Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է: Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը, գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ԱՆՔԱՐՏ ԿԱՆԽԻԿԱՑՈՒՄ

Հայէկոնոմբանկի հաճախորդներն այսուհետ կարող են 24/7 ռեժիմով առանց քարտի առկայության AEB Mobile-ով իրենց հաշիվներից գումար կանխիկացնել Բանկի բանկոմատներից:

Այս գործիքը գումար կանխիկացնելու այլընտրանք է այն իրավիճակներում, երբ ֆիզիկական քարտը Ձեզ մոտ չէ, բայց ունեք կանխիկ դրամի հրատապ անհրաժեշտություն:

Ինչպե՞ս կատարել անքարտ կանխիկացում

- Մուտք գործել AEB Mobile հավելված եւ սեղմել + նշանը,
- Անցնել Հայտեր դաշտը, ապա մուտք գործել Հաշիվներ,
- Ընտրել Անքարտ կանխիկացում հրահանգը,
- Լրացնել անհրաժեշտ դաշտերը, գեներացնել կանխիկացման 6-անիշ կոդը եւ 30 րոպեների ընթացքում մուտքագրել այն բանկոմատի վրա՝ ընտրելով այլ ծառայություններ դաշտը:

Գործարքի հիմնական պայմանները

- Արժույթը՝ ծառայությունը հասանելի է միայն դրամով (AMD),
- Հաշիվների տեսակը՝ կանխիկացումը հնարավոր է կատարել հաշվարկային եւ քարտային դրամային հաշիվներից (բացառությամբ՝ Arca նվեր, Arca Սոցիալական քարտերի եւ խնայողական հաշիվների):
- Միջնորդավճարներ՝ ստանդարտ սակագինը կազմում է 0.5% (նվազագույնը՝ 100 դրամ), իսկ VISA Guru եւ Armec's քարտային հաշիվներից կանխիկացման դեպքում՝ 3%:

Սահմանաչափեր

- Մեկ գործարքի առավելագույն գումար՝ 400,000 դրամ, նվազագույնը՝ 1,000 դրամ:
- Օրական գործարքների առավելագույն հանրագումար՝ 1,000,000 դրամ:
- Օրական գործարքների առավելագույն քանակ՝ 10 անգամ:

Թվային ծառայությունների զարգացումը Հայէկոնոմբանկի համար միայն տեխնոլոգիական խնդիր չէ, այլ ցանկացած իրավիճակում հաճախորդի համար հարմար եւ անվտանգ միջավայի ձեւավորումը:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱԱ-2026

ԻՆՉՊԵՍ ԱՆՑԱՎ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սովորաբար աշխարհի առաջնություններն ուղեկցվում են մեկ գլոբալ շոուով, սակայն այս տարի ՖԻՖԱ-ն որոշել է բացման արարողությունը բաժանել մրցաշարն ընդունող երեք երկրների միջև: Տոնական մեկնարկը տվեց Մեքսիկայի լեգենդար «Ացտեկա» մարզադաշտում: Դրան կհաջորդեն արարողությունները Կանադայում (Տորոնտո) եւ ԱՄՆ-ում (Լոս Անջելես), գրում է armsport-ը:

Յուրաքանչյուր երկիր կներկայացնի յուրօրինակ շոու՝ հագեցած տեղական մշակույթով, խորհրդանիշներով եւ հատուկ ընտրված երաժիշտներով: Մեքսիկական շոուն տեւեց մոտ 17 րոպե, իսկ Տորոնտոյի եւ Լոս Անջելեսի ներկայացումները հավանաբար էլ ավելի կարճ կլինեն: «Ացտեկայի» խոտածածկը պատված էր ոսկեգույն նախշերով հսկայական փիրուզագույն ծածկոցով, որը խորհրդանշում էր ավանդական մեքսիկական թղթե ժանյակները. դրանցով զարդարում են տներն ու փողոցները տոների ժամանակ: Կենտրոնում վեր էր խոյանում Աշխարհի գավաթի հսկայական ոսկեզօծ կրկնօրինակը, որի շուրջ պարում էին հարյուրավոր արտիստներ՝ կրելով ֆոլկլորային տարազներ եւ ացտեկների ու մինչկոլումբոսյան մշակույթը մարմնավորող փետրավոր գլխարկներ: Մեկ այլ խումբ ներկայացավ ոսկեգույն զգեստներով՝ ձեռքերին մանրակերտ գավաթներ պահած: Այս ամենն ուղեկցվում էր թմբուկների զարկերով, ծխով ու հրավառությամբ: Վիզուալ էֆեկտների համար պատասխանատու էր «Balich Wonder» ստուդիան՝ Մարկո Բալիչի գլխավորությամբ:

Շոուն հագեցած էր երաժշտական աստղային ելույթներով. Մեքսիկական հայտնի փոփ-ռոք խումբ Mann-ն կատարեց իր Oye Mi Amor հիթը: Danny Ocean-ը հանդես եկավ հատուկ ԱԱ-2026-ի համար գրված Partidazo փոփ-կատարմամբ: Մեքսիկական Los Angeles Azules խումբն ու փոփ-երգչուհի Belinda-ն կատարեցին Por Ella կրակոտ սինգլը: J Balvin-ը ռեգետոն եւ լատինո-փոփ ռիթմեր հաղորդեց մարզադաշտին:

Արարողության գագաթնակետը դարձավ Շակիրայի եւ Burna Boy-ի ելույթը՝ ԱԱ-2026-ի պաշտոնական Dai Dai երգով: Ի դեպ, Շակիրան Աշխարհի առաջնության բացման արարողությանը մասնակցել էր նաեւ 16 տարի առաջ՝ ՀԱՀ-ում կայացած Մունդիալ-2010-ի ժամանակ:

Էկրաններին վայրկյաններով հայտնվեցին երկու «Labubu» կերպարներ: Սա ՖԻՖԱ-ի եւ խաղալիքներ արտադրող Pop Mart ընկերության հատուկ գովազդային ինտեգրացիան էր, որոնք ԱԱ-ի համար համատեղ հավաքածու են թողարկել: Մեքսիկայի դրոշի գույներով հրավառությունից հետո խաղադաշտ դուրս եկավ հոլիվուդյան դերասանուհի Սալմա Հայեկը՝ որպես ՖԻՖԱ-ի պաշտոնական դեսպան եւ միջոցառման հաղորդավարուհի: Նա աչքի էր ընկնում կրակոտ կարմիր զգեստով:

Ողջունելով երկրպագուներին՝ Հայեկն ազդարարեց դրոշների շքերթի մեկնարկը: Այնուհետեւ լեգենդար իտալացի տենոր Անդրեա Բոչելին եւ հարավկորեացի Ejae-ն կատարեցին ԱԱ-ի եւս մեկ պաշտոնական հիմն՝ DNA (More Than A Game) ստեղծագործությունը:

Արարողության եզրափակիչ հատվածում Սալմա Հայեկն ու ՖԻՖԱ-ի նախագահ Ջանի Ինֆանտինոն հանրությանը ցուցադրեցին Աշխարհի գավաթը: Ֆուտբոլային մեծ տոնը մեկնարկած է:

ԱՌԱՋԻՆ ԽԱՂԵՐԸ

ԱԱ-2026-ի խմբային փուլի առաջին տուրում Հարավային Կորեայի հավաքականը դրամատիկ ոլորտում 2:1 հաշվով կամային հաղթանակ տարավ Չեխիայի նկատմամբ: Ա խմբի հանդիպումը կայացավ Մեքսիկայի Սաղոռղան քաղաքի «Էստադիո Ակրոն» մարզադաշտում:

Առաջին խաղակեսն անցավ հավասար պայքարում եւ առանց գոլերի, սակայն հիմնական իրադարձությունները զարգացան ընդմիջումից հետո: 59-րդ րոպեին Լադիսլավ Կրեյչին բացեց հաշիվը՝ գլխի դիպուկ հարվածով: Չեխերի ուրախությունը, սակայն, կարճ տեւեց. կորեացիներին հաջողվեց արագորեն վերականգնել հավասարությունը Հվան Ին Բոմի ջանքերով: 77-րդ րոպեին Չեխիան կարող էր կրկին առաջ անցնել, բայց Տոմաշ Սոուչեկի խփած գոլը չեղարկվեց VAR-ի միջամտությունից հետո՝ խաղից դուրս վիճակի պատճառով: Դրան անմիջապես հաջորդեց կորեացիների սուր պատասխան գրոհը, որն արդյունավետ հարվածով եզրափակեց Օ Հյոն Գյուն՝ հաղթանակ պարգեւելով ասիական թիմին: Հանդիպման լավագույն ֆուտբոլիստ ճանաչվեց կորեացի կիսապաշտպան Հվան Ին Բոմը, ով դարձավ գոլի եւ գոլային փոխանցման հեղինակ: Նա փոխարինվեց 84-րդ րոպեին՝ իր տեղը զիջելով Պակ Ջին Սոբին:

Պատմական գոլ Չեխիայի համար

Լադիսլավ Կրեյչիի գնդակը Չեխիայի հավաքականի առաջին գոլն էր Աշխարհի առաջնություններում վերջին 20 տարվա ընթացքում: Նախորդ անգամ չեխերն աչքի էին ընկել 2006 թվականի հունիսի 12-ին, երբ Յան Կոլերը գրավել էր ԱՄՆ-ի դարպասը (3:0): Չեխերի հակառեկորդը. Չնայած գոլային երաշտը կոտրելուն՝ Չեխիան կրեց իր երրորդ անընդմեջ պարտությունը Աշխարհի առաջնություններում (նախորդ երկուսը՝ 2006-ին Գանայից եւ Իտալիայից): Սա թիմի ամենաերկար պարտությունների շարքն է այս մրցաշարում՝ սկսած 1966 թվականից:

Կորեայի հաղթական շարքը եվրոպացիների դեմ

Ասիական հավաքականն ԱԱ-ներում տարավ իր երրորդ անընդմեջ հաղթանակը եվրոպական թիմերի նկատմամբ: Նախկինում նրանք խմբային փուլում պարտության էին մատնել Պորտուգալիային (2:1՝ 2022թ.) եւ Գերմանիային (2:0՝2018թ.):

Ա խմբում Հարավային Կորեան վաստակած 3 միավորով զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: Առաջատարը Մեքսիկան է, որը բացման խաղում 2:0 հաշվով հաղթել էր Հարավաֆրիկյան Հանրապետությանը (ՀԱՀ): Չեխիան ու ՀԱՀ-ը դեռ միավորներ չունեն: Հաջորդ տուրում, որը կկայանա լույս հունիսի 19-ի գիշերը, Հարավային Կորեան կմրցի Մեքսիկայի հետ, իսկ Չեխիան հունիսի 18-ին կփորձի առաջին միավորները վաստակել ՀԱՀ-ի հետ խաղում: (Նյութը՝armsport-ից)

ԼՈՒՐԵՐ

ԻԼՈՆ ՄԱՍԿԸ՝ ՏՐԻԼԻՈՆԱՏԵՐ

Ամերիկացի գործարար Իլոն Մասկը դարձել է պատմության մեջ առաջին տրիլիոնատերը՝ շնորհիվ SpaceX ընկերության բաժնետոմսերի IPO-ի (առաջնային հրապարակային տեղաբաշխման): Այս մասին հայտնել է Reuters գործակալությունը:

«Մասկի կարողության հիմնական մասն այժմ կապված է SpaceX-ի հետ, որտեղ նրա մասնաբաժինը գնահատվում է մոտ 866 միլիարդ դոլար: Tesla-ի եւ մնացած ակտիվների հետ միասին նրա կարողությունը կգերազանցի 1,1 տրիլիոն դոլարը ուրբաթ օրը առեւտրի մեկնարկի պահին՝ համաձայն Forbes-ի եւ Reuters-ի հաշվարկների, որոնք հիմնված են ընկերության փաստաթղթերի վրա»,- ասվում է հրապարակման մեջ: Միեւնույն ժամանակ, Washington Post թերթը նշում է, որ Մասկի՝ պատմության մեջ առաջին տրիլիոնատեր լինելու կարգավիճակը հստակեցման կարիք ունի. SpaceX-ի կողմից նրան հատկացված բաժնետոմսերի փաթեթները եկամուտ կբերեն միայն հավակնոտ նպատակների իրականացման դեպքում, մասնավորապես՝ Մարսի գաղութացման: Առանց այդ բաժնետոմսերը հաշվի առնելու՝ Մասկը այս պահին չի կարող համարվել այդքան հարուստ մարդ: Ավելի վաղ ընկերությունը հայտնել էր, որ IPO-ի շրջանակներում կներգրավի ռեկորդային 75 միլիարդ դոլար: Տեղաբաշխումը պետք է գերազանցի Սաուդյան Արաբիայի Saudi Aramco պետական նավթագազային ընկերության IPO-ի ռեկորդը, որը 2019 թվականին ներգրավել էր 25,6 միլիարդ դոլար: Aramco-ի գնահատումն այն ժամանակ կազմել էր 1,7 տրիլիոն դոլար: Միաժամանակ, լրատվամիջոցները հայտնում էին, որ մեկ բաժնետոմսի դիմաց 135 դոլար տեղաբաշխման գնի դեպքում SpaceX-ը կգնահատվի 1,75 տրիլիոն դոլար: Nasdaq բորսայում SpaceX-ի բաժնետոմսերի առեւտուրը կսկսվի ուրբաթ օրը՝ տեղական ժամանակով առավոտյան 9:30-ին (Երեւանի ժամանակով 17:30-ին):

ԱՐԳԵԼԱՓԱԿՎԵԼ Է

«Բարսելոնայի» նախկին ֆուտբոլիստ եւ գլխավոր մարզիչ Չավիին հեռացրել են ակումբի աստղերի մրցաշարի մասնակիցների ցանկից, գրում է armsport-ը: Ինչպես հայտնում է իսպանական ազդեցիկ AS պարբերականը, որոշման պատճառը ակումբի նախագահ Ժոան Լապորտայի հետ ունեցած կոնֆլիկտն է: Աղբյուրի համաձայն՝ Չավիի մերժման հիմքում ընկած է ընտրություններից առաջ «կապտանռնագույնների» նախագահի հասցեին նրա կողմից հնչեցրած քննադատությունը: Նշվում է, որ միջոցառման կազմակերպիչներն արդեն կապ են հաստատել նախկին կիսապաշտպանի գործակալի հետ եւ փոխանցել կոշտ ուղերձ. «Նրան այստեղ չեն սպասում, իսկ հանդիպումներին մասնակցելու նրա առաջարկը մերժված է»: «Բարսելոնայի» աստղերի մրցաշարի շրջանակում նախատեսվում է անցկացնել երկու ցուցադրական հանդիպում՝ Մայամիում եւ Սեուլում: Նախնական ծրագրով Չավին պետք է խաղադաշտ դուրս գար իր նախկին թիմակիցների՝ Սերխիո Բուսկետսի, Ժորդի Ալբայի, Խավիեր Մասկերանոյի եւ այլ աստղերի հետ, սակայն այժմ այդ վերամիավորումը չեղարկված է:

● *Ա.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 17-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Դիմակահանդես» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է չափվում կենտրոնական բանկի անկախությունը:

Լուսինե Սիմոնյան, 57 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կան մի քանի ինդեքսներ, որոնք չափում են կենտրոնական բանկի անկախությունը: Դրանք ներառում են Ալեսինի ինդեքսը (1988), GMT ինդեքսը (Գրիլի, Մասցիանդարո, Տաբելինի) (Grilli, V., Masciandaro, D., Tabellini, G., 1991; Political and Monetary Institutions and Public Financial Policies in the Industrial Countries. 1991), Կուկերմանի ինդեքսը (1992): Հայաստանի համար վերլուծությունը, որն իրականացվել է Կուկերմանի կողմից (Կուկերմանի ինդեքս) 2000 թվականին, ամփոփում է Կենտրոնական Բանկի անկախության գնահատականները (Cukierman A., Miller J., Neyapti B., Central Bank Reform, Liberalization and Inflation in Transition Economies. An International Perspective, Journal of Monetary Economics 49, 2002):

Վերլուծությունն իրականացվել է չափանիշների երկու խմբով: Այս չափանիշների մեկ խմբով Հայաստանը զբաղեցնում է 1-ին տեղը ԱՊՀ եւ Արեւելյան Եվրոպայի 23 երկրների շարքում, իսկ մյուս խմբի չափանիշներով երկրին տրվում է երկրորդ տեղը:

2013 թվականի գնահատականների հիման վրա Հայաստանի Կենտրոնական Բանկը պահպանել է անկախության բարձր աստիճանը:

ՀՀ ԿԲ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթական չափանիշը:

Գագիկ Աբրահամյան, 44 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում: Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Վանաձորում քամին կոտրել է հաստաբուն ծառը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 8 + 17 + 22
Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 17 + 21
Կոտայքի նախալեռներ	+ 12 + 15 + 23 + 26
Գեղարքունիք	+ 5 + 9 + 16 + 21
Լոռի	+ 6 + 10 + 20 + 24
Տավուշ	+ 6 + 9 + 21 + 24
Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 17 + 21
Արագածոտնի նախալեռներ	+ 10 + 15 + 23 + 28

Արարատ	+ 13 + 16 + 26 + 29
Արմավիր	+ 14 + 17 + 27 + 30
Վայոց ձորի լեռներ	+ 5 + 8 + 17 + 21
Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
Սյունիքի լեռներ	+ 6 + 9 + 16 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 9 + 14 + 20 + 24
Սյունիքի հովիտներ	+ 15 + 18 + 26 + 30
Երեւան	+ 14 + 16 + 30 + 32

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*